

Տաճար Գեղարդայ. — Eglise de la S.te Lance.

յորոց անուն Եօթն եկեղեցիս իսկ կոչէն ռամիկք զտեղին, և իբրև մի եկեղեցի միացեալ 40 խորանօք։ Անդէն ընդ մտանել 'ի վանան՝ ընդ առաջ լինի եկեղեցին մեծ կոփածոյիւք կառուցեալ համակ, և արոհեալ 'ի տաճար և 'ի ժամատուն. տաճարն անսիւն բարձրանայ սրածայր կամթողնկէիւ. 'ի չորեսին անկիւնս նորին են մի մի աւանդատունք կրկնայարկք,

Մատուռն ի Գառնի. — Chapelle à Karni.

սիւնազարդք կամ աղօթատեղիք. իսկ ժամատունն ընդարձակագոյն ևս է՝ յարկեալ 'ի վերայ չորից միաստանի հակայաձև սեանց թանձր վերնախարսխօք, յորոց վերայ ամբառնայ կամթողնկէ քառակուսի իմն ձևով, խորշխորշեայ փորածովք և լուսամուտս մեծաւ, յորմէ միայն լոյս առնու եկեղեցին. կամարք ուղիղ ձգեալ 'ի սեանցն՝ յուր կամարաբաժինս արոհեն. առ դրամբն որ 'ի նեղբինն մուծանէ տաճար՝ կանգնեալ են աստի և անտի խաչվէմք մեծամեծք, կարի յոյժ ճարտար արուեստարկեալ. և համբրէն իսկ եկեղեցին քանդակեալ է խիտ և հոծ գրուագօք և արձանագրութեամբք, և դեղեցիկ օրինակ ընծայէ ճարտարապետութեան, թէպէտ և մանր մասունք նորա չեն քաջ զուգապատշաճք և նմանք միմեանց. 'ի վերայ միջնադրան անդ կայ արձանագրութիւն շինութեան յամին ՈԿԳ (1214)։ Հիւսիսային որմն եկեղեցւոյս է միանգաղաղ վէմ յղկեալ՝ երեսք առապարին, և կրկին բարձր է քան զեկեղեցին, և վէմն զբընութիւն երկանաքարի ունի. 'ի նմա հատեալ փորեալ է մատրունս երիս որմնակիցս, և յերիցն վերայ միւս այլ ընդարձակագոյն. մուտք առաջնոյն են 'ի ժամատանէն, և է փոքր, իբրև ուղիղ ոտք յերկայնութիւն և 'ի լայնութիւն հաւասար, ձեղունն գմբեթաւոր ամբառնայ, և 'ի հարաւոյ ունի զլուսամուտն բոլորշի. 20 ոտս բարձր 'ի յատակէն՝ հատեալ և գործեալ է բեմն և սեղանն 'ի նմին իսկ 'ի վիմէ. 'ի հիւսիսակողմն այսր մատրան կայ խորշ մի ուղիղ ոտնաչափ, կրկին կամարօք զատուցեալ, ընդ որով կան դերեղմանք, և յորմին ընդ կամարօքն՝ բարձր